ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-161 30.11 2011 թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Կից ներկայացնում եմ Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ավագանու՝ 2011թ-ի Նոյեմբերի 28-ի թիվ 9 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 9 էջ:

Պտղունք համայնքի /Ս.Զեյնալյան/

ՊՏՂՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՄԱՐԶ ՀՀ • 04701766

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք № 11625-11
«07» 12 2011 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«28» ՆՈՅԵՄԲԵՐ - Ի 2011 թվականի N 1

### ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով համայնքի ավագանին որոշում է`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Արթենյան Արամ | | | |
| 2.Բալեյան Միհր | | | |
| 3.Գրիգորյան Սարգիս | | | |
| 4.Հովհաննիսյան Ալիկ | | | |
| 5.Հակոբյան Արտաշ | | | |
| 6.Խաչատրյան Նվեր | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Սամվել Զեյնալյան

Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի
ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ N1
ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ.

/ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՋԵՅՆԱԼՅԱՆ/

2. ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՋԵՅՆԱԼՅԱՆ/

3.ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ:

/ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՋԵՅՆԱԼՅԱՆ/

4. .ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՋԵՅՆԱԼՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«28» ՆՈՅԵՄԲԵՐ-Ի 2011 թվականի N 2 Ն

## ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվել «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Պտղունք համայնքի կողմից 2012 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Արթենյան Արամ | | | |
| 2.Բալեյան Միեր | | | |
| 3.Գրիգորյան Սարգիս | | | |
| 4.Հովհաննիսյան Ալիկ | | | |
| 5.Հակոբյան Արտաշ | | | |
| 6.Խաչատրյան Նվեր | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս .ՋԵՅՆԱԼՅԱՆ

Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 – Ի
ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

«1.» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

«1)» մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000դրամ:

«2)» սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

«ա/» 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000դրամ.

«բ/» 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝15000դրամ.

«գ/»1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000դրամ.

ոչ հիմնական շինությունների համար՝

«3)» մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000դրամ.

«4)» 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500դրամ:

«2.» Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

«1)» չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ.

«2)» բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 10-րդ հոդվածի

1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

«3)» նախատեսվում է միայն կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

«3.» Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000դրամ:

«4.» Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

«1)» ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1500դրամ:

«2)» ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

«5.» համայնքի տարածքում.

«1)»բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:

«2)» հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

«6.» Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

«1)» ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոսի արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000դրամ.

«2)» թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500դրամ.

«3)» այլ արտաքին գովազդի համար՝ 500դրամ.

«4)» դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

«7.» Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000դրամ:

«8.» Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1500դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

« 28 » ՆՈՅԵՄԲԵՐ -Ի 2011 թվականի N 3 Ն

ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվել «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Պտղունք համայնքի կողմից 2012 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը::

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Արթենյան Արամ | | | |
| 2.Բալեյան Միհր | | | |
| 3.Գրիգորյան Սարգիս | | | |
| 4.Հովհաննիսյան Ալիկ | | | |
| 5.Հակոբյան Արտաշ | | | |
| 6.Խաչատրյան Նվեր | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՁԵՅՆԱԼՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2010ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 – Ի
ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Պտղունք համայնքի տարածքում աղբաթափության գործընթացը նորմալ և արդյունավետ կազմակերպելու նպատակով համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչից գանձել 70 դրամ ամսական վճար:
2. Պտղունք համայնքի «Տեր և Տիկին Ղազարյանների անվան» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի կողմից գանձվող ծնող գումարը սահմանել ամսական 3500 դրամ:
3. Պտղունք համայնքի «Տեր և Տիկին Ղազարյանների անվան» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ, համայնքում հաշվառված ընտանիքներից յուրաքանչյուր երկրորդ և հաջորդ երեխայի հաճախման դեպքում ամսական վճարը սահմանել երկրորդ և հաջորդ երեխայի համար ծնող գումարի 50%-ի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

« 28 » ՆՈՅԵՄԲԵՐ -ի 2011 թվականի N 4

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին որոշում է՝

1. Պտղունք համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ 150000դրամ գումարի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Արթենյան Արամ | | | |
| 2.Բալեյան Միեր | | | |
| 3.Գրիգորյան Սարգիս | | | |
| 4.Հովհաննիսյան Ալիկ | | | |
| 5.Հակոբյան Արտաշ | | | |
| 6.Խաչատրյան Նվեր | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՔԵՅՆԱԼՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի
ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ

## ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Ջեյնայյան Ռազմիկ - 35000 դրամ
2. Հարությունյան Հասմիկ - 35000 դրամ
3. Հարությունյան Արփինե - 35000 դրամ
4. Գրիգորյան Աղասի - 30000 դրամ
5. Հարությունյան Սուրեն - 15000 դրամ